

<Ընտրական հանձնաժողովները պետք է երիտասարդանան>, <Ազատ Արցախ>, N107  
առ 01.10.2013թ.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱՆ

Արմիդա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ք. Շուշի

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ օրերս Շուշի քաղաքում անց է կացվել մասնագիտական դասընթաց՝ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների հետ: Շուշիի տարածքային ընտրական հանձնաժողովին դասընթացին մասնակցելու հայտ են ներկայացրել 92 քաղաքացիներ շրջկենտրոնից և շրջանի Եղցահող, Լիսագոր, Հին շեն, Մեծ շեն, Քարին տակ և Քիրսավան համայնքներից: Դասընթացը, որին ներկայացել էին ոչ բոլոր դիմորդները, անմիջականորեն վարել և ստուգարքն ընդունել են ԼՂՀ ԿՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը, տեղակալ Եղիշե Արզումանյանը, քարտուղար Ռայա Նազարյանը:

ԼՂՀ ԿՀ նորընտիր նախագահը հանգամանորեն անդրադարձավ ընտրական օրենսդրության ընդհանուր դրույթներին, առանձնակի ուշադրություն հրավիրեց ընտրական գործընթացում ճիշտ, գրագետ, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ պահպանելուն թե ընտրողների, թե, այսպես կոչված, արտաքին աշխարհի ներկայացուցիչների՝ դիտորդների, վստահված անձանց, լրագրողների հետ շփումներում: Անմիջական մթնոլորտում, հարց ու պատասխանի ձևով, ԿՀ նախագահը խոսեց ընտրությունների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ կարևոր պայմանների, իրավական պահանջների մասին:

ԼՂՀ ԿՀ նախագահի տեղակալ Ե. Արզումանյանի ընդգրկուն զեկույցը բովանդակում էր տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման, գործունեության, հանձնաժողովների անդամների իրավունքների և պարտականությունների մեկնաբանություններ: ԿՀ քարտուղար Ռայա Նազարյանը լսարանին ներկայացավ քվեարկության ընթացքի, արդյունքների ամփոփման, ընտրական ձևաթղթերի լրացման, գործավարության կարգի պարզաբանումներով:

Շուշիի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Վաչագան Զաքարյանը հանձնաժողովում 11 տարվա փորձ ունի, որից 4-ը՝ նախագահի պաշտոնում: Իր ընտրական գործունեության ընթացքում Շուշիի ընտրատարածքում չի հանդիպել այնպիսի ընտրախախտման, որն էականորեն ազդել է քվեարկության արդյունքների վրա: Ըստ նրա դիտարկումների, որոնցով նա ներկայացավ լսարանին, գյուղական ընտրատարածքներում տարածված են այնպիսի խախտումներ, ինչպիսիք տեղամասային կենտրոնի մոտ կուտակումներ ստեղծելն ու առանց անձնագրի ներկայանալն է:

Ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներին ցուցադրված տեսանյութը մատչելիորեն ներկայացնում էր ընտրությունների կազմակերպման ու անցկացման ընթացքը, հնարավոր հարցերի պատասխանները:

ԿՀ ներկայացուցիչների ընդունած ստուգարքի արդյունքում 92 քաղաքացի ստացավ ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք, արդյունքների վերջնական ամփոփումից հետո առաջիկայում նրանց կտրվեն համապատասխան վկայականներ: Ստուգարք հանձնաձևերից 14-ը առաջին անգամ է մասնակցում այս դասընթացին:

Գյուղական ընտրատեղամասերը համալրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ օրենքով սահմանված կազմի լրիվ քանակով: Դասընթացին չեն

ներկայացել Քիրսավանի դիմորդները, պատճառը շրջկենտրոնից հեռու լինելն է: ԼՂՀ ԿԸՀ նախագահի որոշմամբ՝ որակավորման դասընթացը կանցկացվի տեղում՝ դիմորդների համար ավելորդ խնդիրներ չստեղծելու համար:

Ընդհանուր առմամբ, ինչպես նշեց ԿԸՀ նախագահը, դասընթացի ավարտից հետո Շուշիի հանձնաժողովի հետ գրույց-ծանոթության ընթացքում լսարանը տեղեկացված է ընտրական գործընթացին, հատկապես ստուգարքի ժամանակ դրական տպավորություն են թողել երիտասարդները, որոնց թիվը համեմատաբար քիչ է, քան մյուս շրջաններում: Ս.

Արզումանյանը խորհուրդ տվեց ընտրական հանձնաժողովներում ընդգրկել երիտասարդների՝ նրանց պետականաշինության գործին անմիջական մասնակից դարձնելու նպատակով:

Որակավորման դասընթացը քայլ է 2015 թվականի ԱԺ ընտրություններին ընդառաջ, քանի որ մինչ այդ Շուշիի ընտրատարածքում այլ ընտրություններ չեն նախատեսվում: